ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

թիվ 03-84

«02» մայիսի 2011թ

Լոռու մարզպետ

պարոն Ա. Բոչարյանին

Կից ներկայացնում ենք Թումանյան համայնքի ղեկավարի թիվ 11-Ա-16 որոշումները և աշխատակազմի քարտուղարի թիվ 9-11 հրամանները:

Թումանյանի քաղաքապետ / Լ. Զաքարյան /

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ

«15» ապրիլի 2011թ. ՈՐՈՇՈՒՄ թիվ 16

ԳՈՒՅՔԻ ՀԱՆՁՆՈՒՄ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16 հոդվածի 14-րդ կետի և 15-րդ կետի և հիմք ընդունելով Թումանյան համայնքի ավագանու 2011թ. մարտի 18-ի թիվ 6 որոշումը.

1.Թումանյանի քաղաքային համայնքի ենթակայության բյուջետային հիմնարկի թիվ 2 մանկապարտեզի հիմնական և մանրարժեք գույքը հանձնել «ՀՀ Լոռու մարզի ք. Թումանյանի նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը:

2.Հանձնում-ընդունման համար ստեղծել հանձնաժողով՝ հետևյալ կազմով.

Հանձնաժողովի նախագահ՝ Երվանդ Շաքարյան՝ քաղաքապետի օգնական

Հանձնաժողովի անդամներ՝ Անուշ Ամիրջանյան՝առաջատար մասնագետ-հաշվապահ

Անետա Շիմալյան՝ նախադպրոցական ուսումնական հաստատության հաշվապահ

Հայկանուշ Աղամյան՝ նախադպրոցական ուսումնական հաստատության տնօրեն

Թումանյանի քաղաքապետ /Լ. Զավարյան/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ

«15» ապրիլի 2011թ. ՈՐՈՇՈՒՄ թիվ 15

# «ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ Ք. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԻՑ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 37 հոդվածով և ՀՀ «Հողային օրենսգրքի» 118 հոդվածի 4-րդ մասով.

«ՀՀ Լոռու մարզի ք. Թումանյանի նախադպրոցական ուսումնական հաստատության» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կից հողատարածքը՝ 2.145 քմ, հատկացնել նախադպրոցական ուսումնական հաստատությանը:

Թումանյանի քաղաքապետ՝ /Լ. Զաքարյան/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ

«15» ապրիլի 2011թ. ՈՐՈՇՈՒՄ թիվ 14-Ն

# ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2011Թ. ՃՇՏՎԱԾ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ, ՆԱԽԱՀԱՇԻՎՆԵՐԻ, ԵԿԱՄՏԱՅԻՆ (ՄՈՒՏՔԱՅԻՆ) ԵՎ ԵԼՔԱՅԻՆ (ԾԱԽՍԱՅԻՆ) ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ԲԱՇԽՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին կետի և առաջնորդվելով «Թումանյան համայնքի 2011թ. բյուջեում փոփոխություններ կատարելու մասին» ավագանու 15.04.2011թ. թիվ 13-Ն որոշմամբ.

1.Հաստատել համայնքի 2011թ. ճշտված բյուջեի եկամտային (մուտքային) և ելքային (ծախսային) եռամսյակային բաշխումը /հավելված 1, 2/

2.Հաստատել համայնքի ծախսերի նախահաշիվները՝ ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման հոդվածների /հավելված 2, 4/

Թումանյանի քաղաքապետ՝ /Լ. Ջավարյան/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ

«14» ապրիլի 2011թ. ՈՐՈՇՈՒՄ թիվ 13-Ա

# ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Թումանյանի քաղաքային համայնքի ավագանու «Թումանյանի քաղաքային համայնքի տարածքում 2011թ. համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին» 2010թ. նոյեմբերի 10-ի թիվ 30-Ն որոշումը և Թումանյան համայնքի բնակչուհի Հայկուշ Յոլակի Սարգսյանի դիմումը.

Թույլատրել Թումանյան քաղաքի բնակչուհի Հայկուշ Յոլակի Սարգսյանին՝ 2011թ. ընթացքում իրականացնելու ոգելից խմիչքի և ծխախոտի արտադրանքի վաճառք:

Թումանյանի քաղաքապետ /Լ. Ջավարյան/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ

«11» ապրիլի 2011թ. ՈՐՈՇՈՒՄ թիվ 12-Ա

# ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Ազգային ժողովի կողմից 2011թ. փետրվարի 10-ին ընդունված «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքով և «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 72-րդ հոդվածով.

1.Հաստատել Թումանյան համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղարի պաշտոնի անձնագիրը՝ համաձայն թիվ 1 հավելվածի:

2.Ուժը կորցրած ճանաչել Թումանյան համայնքի ղեկավարի 12.04.2010թ. «Թումանյան համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղարի համայնքային ծառայության պաշտոնի անձնագիրը հաստատելու մասին» թիվ 26-Ա որոշման թիվ 1 հավելվածը:

Թումանյանի քաղաքապետ՝ /Լ. Զավարյան/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ

«07» ապրիլի 2011թ. ՈՐՈՇՈՒՄ թիվ 11-Ա

# ԹՈՒՄԱՆՅԱՆ ՔԱՂԱՔԻ 3-ՐԴ ՓՈՂՈՑԻ Ն/Մ 4-ՐԴ ՇԵՆՔԻ 5-ՐԴ ԲՆԱԿԱՐԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍԻ ՍԽԱԼ ՉԱՓԱԳՐՈՒՄԸ ՈՒՂՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀԿԱԳԿՊԿ Ալավերդու տարածքային ստորաբաժանման 20.01.2011թ. թիվ ԴԹ- 0154 գրությունը.

Թումանյան քաղաքի բնակիչ Վարդգես Անաստասի Անդրեասյանին համասեփականատեր Ալվարդ Տիտանյանին, Լարիսա, Արտակ և Արկադի Անդրեասյաններին պատկանող 3-րդ փողոցի Ն/Մ 4-րդ շենքի 5-րդ բնակարանի ընդհանուր ներքին մակերեսը կազմում է 178.2 քմ:Թումանյանի ավագանու խորհրդի 30.12.1993թ. արձանագրության թիվ 12 կետ 1 որոշման համաձայն՝ սեփականաշնորհվել է 146.4 քառակուսի մակերես: Նախկինում կատարված սխալ չափագրումների պատճառով 21.04.1994թ. կազմված սեփականության վկայագրում գրանցվել է սխալ «հատկացված» 146.4 քմ մակերեսը, պակաս է չափագրվել 31.8 քմ մակերես, որը հատկացնել իրենց:

Թումանյանի քաղաքապետ /Լ. Զավարյան/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

«26» ապրիլի 2011թ. Հրաման թիվ 11

# ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն ՀՀ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 30 հոդվածի 3-րդ մասի 10-րդ կետի, ՀՀ «Աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի 66 հոդվածի.

Թումանյանի քաղաքապետարանի տնտեսաշխատող Արփիկ Մելքումյանին ս/թ մայիսի 1-ից հատկացնել իրեն հասանելիք ամենամյա արձակուրդը՝ 20 աշխատանքային օր:
Աշխատանքի մեջ համարել ս/թ մայիսի 31-ին:

Աշխատակազմի քարտուղար /Ռ. Շահվերդյան/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ

«22» ապրիլի 2011թ. Հրաման թիվ 10

ԳՈՐԾՈՒՂՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասի 10-րդ կետի.

Թումանյանի քաղաքապետարանի վարորդ Արա Մկրտչյանին ս/թ ապրիլի 22-ին 1 օրով գործուղել ք. Երևան՝ ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարության և Տեղեկատվական համակարգերի զարգացման և վերապատրաստման կենտրոն:

Աշխատակազմի քարտուղար /Ռ. Շահվերդյան/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ

«07» ապրիլի 2011թ. Հրաման թիվ 9

ԳՈՐԾՈՒՂՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասի 10-րդ կետի.

Թումանյանի քաղաքապետարանի 1-ին կարգի մասնագետ Էդգար Հախվերդյանին ս/թ ապրիլի 7-ին 1 օրով գործուղել ք. Վանաձոր՝ մարզպետարան՝ զինապարտների հետ կապված ժողովին մասնակցելու:

Աշխատակազմի քարտուղար /Ռ. Շահվերդյան/